

Գարի գգել—Պառաւ կանանց մէջ կային այն-
պիսիները, որոնք «օժտւած» էին դարի դեղով
դուշակութիւններ անելու ընդունակութեամբ:

Գարի դեղով վերցնում էր յոթ ամբողջական
գարու հատիկ, մեկ հաա էլ ջարդված: Ճարդված
գարին այն անձնավորութիւնն էր, որի վերաբեր-
յալ գուշակութիւն էր սրվում: Բոլորը միասին
լցվում էր մի սև լաթի մէջ, մի քանի ծալով ծալ-
վում, ասպ գարի դեղով առաջարկում էր խնդրա-
տուին՝ ձեռքով շոյել գարիների կապոցը ու մըտ-
քում պահել մի խորհուրդ:

Գարի դեղով երեք անգամ խաշակնքում էր
դարիների կապոցը. երեսին խաշ հանելով ու դա-
րու կապոցը առնելով իր երկու ափերի մեջ՝ ինչ-
որ աղոթք էր մըմնջում, երեք անգամ կապոցը
ափերի մեջ թափ էր աալիս, հետո դուշակութեամբ,
որպեսզի կապոցի միջի գարիների աեղերը չփոխ-
վեն (գցելու ժամանակ), բաց էր անում ու խոր
ակնածանքով նայելով գարիների դասավորու-
թեանը, հաակապես ջարդված դարու դիրքին,
սկսում էր դուշակութիւններ անել այն անձնա-
վորութեան վերաբերյալ, որին ինքն իրրե չի ճա-
նաչում և գարի դեղով ավոդն էլ չի ասել իր սրաի
խորհուրդը:

Անշուշտ, դարի դեղով որոշ չափով կոահում
էր, թե խոսքը ում մասին կարող էր լինել ու ըստ
այնմ էլ սկսում էր գուշակութիւններ անել: Ա-
սում էր այն բոլոր հավանական վսիւճանները,
որ կարող էին լինել և աշպիսով հույս ներշնչում
դարի դեղով ավոդին:

Բալնիս դեղ—Նոր Բայադեաում դուշակում
էին բալնիս դեղով միջոցով: Այդպիսի գուշակու-
թիւն անել կարող էին բոլոր կանայք:

Եթե որեւէ ընամանիքի մի որեւէ անգամը գանը-
վում էր օտարութեան մեջ ու երկար ժամանակ
անդեկութիւն չէին ունենում պանգիտից, բալնիս
էին դնում. դուշակելու՝ նամակ կամ մի ալլ ակ-
դեկութիւն կսանաա՞ն նրանից, թե՞ ոչ:

Առավոտայան արեւածագին ընտանիքի հասա-
կավար կինը վերցնում էր մի անցքով բանալի,
անիտու դնում էր փողոցների մի իւսմերուկ, բա-
նալին լուռ նեաում սոչ ոտքի տակ աշնպես, որ ոչ
ոք չնկատի, ասպ ոտքը դնում է բանալու վրա ու
լուռ կանդնում (խոսելը խստիվ արգելվում էր,
ալլապես տըմսը չէր կաաարվի): Այդ վիճակում
այնքան էր կանդնում, մինչև երկու մարդ այդ-
աեղից անցնելիս պաաահակունորեն հանդիպում
էին ու խոսակցութեան բոնվում: Բալնիս դեղով
ուշի-ուշով հեաեում էր նրանց խոսակցութեանը
և եթե նրանք խոսակցութեան մէջ դործ էին ա-

ծում այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ արի, եկավ,
րերեց, կդա, լավ է, լավ, ուրախ եմ և, որոնք այդ
խոսակցութեան ժամանակ կրկնվում էին երեք
անգամ (օրինակ՝ մեկ անգամ ասացին՝ բարով
ես եկել, երկրորդ անգամ ասացին՝ եկավ, վեր-
ջապես երրորդ անգամ էլ ասացին՝ բերեցի՞ր,
լավն է՞), «բալնիս դեղով» թեթեացած սըաով
վերցնում էր բանալին ու ուրախ-ուրախ վերա-
դառնում տուն, բոլոր լսածները մեկ առ մեկ
պատմում ասանցիներին: Իսկ եթե լսում էր՝ չկա,
չեկավ, չդիաեմ և այլն, ապա «բալնիս դեղով»
ախոր վերադառնում էր տուն:

Եթե իսորը խոսակցութիւններ էր լսում և՛
լավ, և՛ վատ, աուն վերադառնալով՝ սկսում էր
վերլուծութիւն կաաարել, մասնակից դարձնելով
մեծահասակ տանեցիներին, երբեմն էլ հարեան-
ներին:

Թիզ չափել—Կային պառավ կանայք, որոնք
թիզ չափելու միջոցով կարող էին դուշակութիւն
անել:

Իրենց սրաում գադանի կամ հայանի ցտնկու-
թիւն, խորհուրդ ունեցող սնահավաա կանայք
(երեխա կունենա՞, թե՞ ոչ, երեխան աղա՞ է լի-
նելու, թե՞ աղջիկ, աանը եթե հիվանդ կա, մա-
նավանդ եթե այդ հիվանդը երկար ժամանակ է,
որ պառկած է անկողնում, կլավտնա՞, թե՞ կմեո-
նի կամ եթե ընամանիքի անդամներէց որեւէ մեկը
դանվում է օտարութեան մեջ՝ դինվոր է, բան-
աարկված է, կամ ուղղակի դնացել է օտարու-
թիւն աշխաաանքի, նամակ կդրի՞ կամ ինքը ե՞րբ
կդա և ալլ հուղող հարցեր) դիմում էին թիզ չա-
փողներին:

Թիզ չափողը իր աջ ձեռքը մեկնում էր խընդ-
րաաուին, որը երեք անգամ շոյում էր նրա ձեռքը
և մոքում մի խորհուրդ պահում: Ձախ ձեռքի
ճկույթի ծայրը դնում էր աջ ձեռքի միջնամաաի
ծայրին և բաց անում ձախ ձեռքը՝ աջ ձեռքի բա-
ղուկի երկայնքով, կրկնելով այդ դործողութիւնը
երեք անգամ, ձախ ձեռքի ճկույթը աեղափոխում
էր բուժ մտաի աեղը, իսկ բուժ մաար՝ դեպի ար-
մունկի ծալը, որից հետո մեկ թիզ չափելով,
ճկույթը նորից աանում էր դեպի աջ ձեռքի ափը,
այնուհետև նորից ճկույթը մեկնում դեպի աջ ձեռ-
քի միջամաար՝ կրկնելով այն երեք անգամ:

Եթե ճկույթի ծայրը հասնում էր միջնամաաին
և անցնում, այսինքն՝ երկարում էր, ուրեմն ավյալ
խորհուրդը կկաաարվի, եթե ճկույթը կարճ էր
մնում, ուրեմն չի կաաարվի: Այս աըաըողութիւն-
նը կոկնվում էր երեք անգամ և եթե երեք անգամ
էլ հաջող էր լինում, ապա խնդրատուն ուրախա-

ցած լավ վարձաւարում էր թիղ շափողին ու հան-
դիստ սրտով դնում սուռն:

Լուսը դնում եմ ծառին—Ծառի կամ ժայռի
վրա դնում էին մի կտոր հաց ու հեռանալով դի-
տում, թէ այդ հացի կտորը աղոտվել կամ մի
որեւէ ալ թռչում, կվերցնի և ինչ ուղղութեամբ
կտանի, ըստ այնմ էլ որոշում էին, թէ ինչ պետք
է լինելու:

Ասենք թէ տանը ծանր հիվանդ կա. թռչունը
հացի կտորը կտուցն առավ ու թռավ դեպի Ռերդի
դուռն, այսինքն՝ դերեզմանատան կողմը, ուրեմն
հիվանդը կ'մեռնէ և տանը այդ տալանդութեան
տակ պրծնի սուղ էր սկսվում, մինչև մի նոր դու-
շակութեան բարի բան չէր խոստանում: Եթէ թռ-
չունը հացը կտուցն առավ ու նորից նստեց ծառի
վրա, այդ նշանակում էր հիվանդը կ'ապանա, եթէ
նույնիսկ հոգեվաճառի մեջ է: Իսկ եթէ թռչունը
հացը կտուցն առնելով՝ թռչում էր մի որեւէ ուղ-
ղութեամբ, մոտավորապէս որոշում էին թէ այդ
վայրերում ինչ սուրբ կա, հիվանդին տանում էին
այնտեղ ու մատաղ անում:

Եթէ ուզում էին դուշակել, թէ պանդուխտից
նստակ կստանան կամ ինքը կգա, հետեւում էին,
թէ ինչ ուղղութեամբ թռավ թռչունը, որը ցույց
էր տալիս, որ մոտ ապագայում կամ նամակ կըս-
տանան պանդուխտից կամ ինքը կգա: Եթէ թռ-
չունը հացի կտորը կտոցին մնում էր ծառին թա-
ռած, ուրեմն նամակը կուշանա:

Երեկոյան աքլորակաւ—Մայրամուտից քիչ
առաջ կամ հետո, եթէ աքլորաղը կանչում էր, այդ
համարվում էր շատ վատ նշան. ենթադրում էին,
որ աքլորաղի տիրոջ տնտեսութեանը մի խոշոր
աղետ կամ փորձանք կ'ապստահի, ուստի կանչող
աքլորաղին անմիջապէս մորթում էին, որպէսզի
չարը խափանվի:

Հալի (վառեկի) կանչը—Լինում էին դեպքեր,
երբ հավը կամ վառեկն էր կանչում աքլորաղի
պէս, համարելով շատ վատ նշան, կանչող հավին
կամ վառեկին անմիջապէս մորթում էին:

Ճննդուկը կանգնում է պատուհանի առաջ—
Ճննդուկը կամ մի այլ թռչուն, եթէ կանգնում էր
պատուհանի առաջ ու ծվլում՝ լավ նշան էր:
Ասում էին, որ պանդուխտից նամակ կգա կամ
մի ալ լավ սեղեկութիւն: Իսկ եթէ թռչունը բաց
դռնից կամ պատուհանից ներս էր մտնում, դա
նույնպէս համարվում էր լավ նշան. նշանակում
էր, թէ շուտով պանդուխտը կ'վերադառնա:

Հնչիլի պալելը—Երբ տանեցիններից մեկն ու
մեկը աչքերը հառած մի կեանք, անթարթ, երկար
ժամանակ մնում էր, ասում էին՝ «հնչիլիքը պա-
ղում են» (աչքերը սառում են), որը շատ լավ

նշան էր. ենթադրում էին մարդ կգա հետո տեղից
կամ նամակ կստանան:

Աման լիզելը—Երբ որեւէ մեկի հարսանիքի օ-
րը վառ եղանակ էր լինում, ձյուն էր դալիս կամ
անձրեւ, ասում էին, որ «Թաղա խարսը բուն րա-
ւիկնեղանին աման ա լիզել»: Դրա համար էլ րա-
ւիկնեղանին, տանը ճաշելիս, թույլ չէին տալիս,
որ հասունացած աղջիկները ճաշամանները լիզեն:

Հնչիլի բեռ ա բարձե—Եթէ մեկն ու մեկի կո-
ւի վրա փռել էր նստում, խիլ, մազ և նման րա-
նեւ, ասում էին. «Հնչիլի բեռ ա րարձե», լավ
նշան էր համարվում. նոր շոր կհագնի կամ աու-
նը հեռուից բեռով-բարձով մարդ կգա: Իյդ պա-
ճատով, բեռն ում աչքին նստում էր, նա թույլ չէր
տալիս, որ այն վերցնեն, այնքան պիտի մնար,
մինչև անկատարի կերպով ընկնելու:

Հնչիլի «խաղալը»—Հատկապէս կանայք էին
մեծ նշանակութիւն տալիս աչքի խաղալուն: Յու-
րաքանչյուր փորձել էր իր աչքը. եթէ աչքն
էր խաղում, որպէս կանոն բոլորի համար էլ լավ
նշան էր. շնայած կային մարդիկ, որոնց համար
ձախ աչքի խաղալն էր լավ նշան՝ խել:

«Խեղ» աչքը խաղալու դեպքում, աչքի տերը
սպասում էր, որ մի լավ ու բարի լուր կստանա
իր պանդուխտից, հարսը հաջողութեամբ կազա-
վի, տղա կբերի, աղջիկ կամ աղա կնշանեն և
այլն:

Նղունգի ծաղկելը—Հաճախ մարդու ձեռքի
մատներին այս կամ այն եղունգը կամ մի մասը
սպիտակում է: Անցյալում ասում էին, թէ եղուն-
գաւորը նոր շոր կամ կոշիկ կհագնի. եթէ միա-
ժամանակ ծաղկել են մի քանի եղունգներ, ապա
ոտից դուրս նոր կհագնի:

Նղունգ սրելը—Երբ երկու մարդ կովում էին
(առավելապէս տղաներ), մյուսները շրջապատում
էին կովողներին ու «եղունգ սրում», այսինքն՝
բոլորը իրենց ձեռքերի եղունգները քսում էին
միմյանց, որպէսզի կոշիկը ավելի բոլորոքվի:

Անձրեւը բղբում ա—Երբ անձրեւ էր դալիս ու
կաթիլներն ընկնելով լճակների մեջ բոլորում
էին (բշտիկներ էին առաջանում), ասում էին, որ
անձրեւը հորդ ու անսկան կլինի:

Տերտերին հանդիպելը—Ճանապարհ դնալիս,
եթէ հանդիպում էին տերտերի, լավ նշան չէր
համարվում ու դորժը ընթանում էր անհաջող-
ապում էին. «Սառանի պառաճա, դժբաճ անհա-
ջող դէմք»: Որպէսզի շարը խափանվի և դորժը
հաջող դնա, պետք է իսկույն մոտակայքում մի
քար դնել ու ջուտ տալ կամ իսկույն ձեռքը կո-
խել դրոպանը և երեք մատից (բութ, ցուցամատ
և միջամատ) կոմրինացիա անել, բութ մատի

ծայրը ուղղելով դեպի քահանան ու արագ անց-
նել:

Դարտակ ամառի հանդիպելը—Եթե մեկը որեւէ
գործի գնալիս հանդիպում էր մեկ ուրիշի՝
ձեռքին լիքը աման՝ կուժ, պարկ, դուլ և այլն, այդ
նշան էր, որ առաջինի գործը հաջող կընթանա:
Իսկ եթե հանդիպում էին մեկին, որի ձեռքին կար
դասարկ աման, անհաջողության կհանդիպեին:
Պետք է անմիջապես ետ դառնային ու ճանա-
պարհի ուղղութիւնը փոխեին:

Փոշտակը—Մեկ անգամ փոշտակը լավ նշան
չէր, երկու անգամը՝ «խեղ» էր, և այդ ժամանակ
մոտ դանվողին ասում էին. «Սարը արա»:

Սատակի պարտ կապելը—Երբ մի բան էր
կորչում, հատկապես երեխաների խաղի ժամա-
նակ (րանալի, գրպանի դանակ, մատիտ, դրիշ,
գրչածայր, վեգ, հոլ և այլն), երեխաները սկսում
էին ուշադրութեամբ փնտրել: Եթե կորուստը չէր
գտնվում, սկսում էին կանչել. «Սատանա, սա-
տանա քո տղի պիճը կապել եմ, մի բան ա կո-
րեմ, զթի առն ընձի»: Այսպես կրկնում էին ու
փնտրում, մինչեւ գտնում էին, կամ, ձանձրանա-
լով, թողնում էին որոնումները:

Նախքան սատանային խնդրելը, որ իրենց կո-
րուստը դանի, երեխաները մի քանի փայտիկներ
էին հավաքում և միմյանց վրա քսոսկուսի ձեռք
շարժում, որպես սատանի աղի պորտ:

Ձեռքի ավեր քո է գալիս—Անցյալում, երբ
մարգու ձեռքի աջ ափը քոր էր դալիս, անկախ
սլաքաճառից, ասում էին՝ փող կղա ձեռքս, իսկ
եթե ձախ ձեռքի ափն էր քոր դալիս, ասում էին՝
փող կծախսվի:

Լուսուռն երեսը լվանում ա—Երբ կատուն երե-
սը լվանում էր, թաթիկներով մաքրում դեմքը,
երեսն էլ թաթիկը տանում այս կամ այն ական-
ջի ետքը, ասում էին. «Լավ ա, դարիբից մի խա-
բար կդու, կամ էլ չէ՝ հենց ինքը դարիբը կգա»:
Այդ սլաքաճառով, երբ կատուն սկսում էր երեսը
լվանալ, մոտ եղողներն ասում էին. «Թաթա տար
հանգձիս հեղեք, թաթա տար հանգձիս հեղեք»:

Դուռակապում քեյի վրա—Եթե թեյի բաժա-
կում մի թեյի ցուլունիկ ուղղահայաց կանգնում
էր բուժակի մեջ, ասում էին՝ այսօր հյուր կունե-
նանք:

Հացը մեկն ու մեկի ձեռքից «թուսլ»—Հաց
սեւեւ ժամանակ, երբ հացի կտորը ձեռքից
ընկնում էր գետնին, ասում էին. «Հեսօր մեր սու-
նը մարթ ա դալու»:

Ձատիկ միջատի վրա գուռակապում—Ձատի-
կը, փոքր, կարծրաթե միջատ է, կարմիր ու սե
բծերով, երեսն է դատկի տոններին՝ դառնանը:
Անցյալում երեխաները, երբ դատիկ էին բռնում

դնում էին ձեռքի վրա ու տսում. «Ձատիկ, դա-
տիկ, իմ մերը տղա՝ կրեքա, թե՛ աղջիկ»: Ասում
էին այնքան, քանի դեռ դատիկը մասն էր գալիս
ձեռքի վրա: Եթե գատիկը բաց էր անում իր թե-
վիկներն ու թռչում, ուրեմն կանչողի մայրը աղա-
պետք է ընկեր, իսկ երբ դատիկը ձեռքից ընկ-
նում էր ցած՝ աղջիկ:

Համբար (թգրեհով) գուռակապում—Համ-
բարի գուռակապումը շատ սարածված էր
Նոր Բայաղեանում: Երբ գուռակել ավոդը խնդրում
էր համբար ունեցողին, որ նա գուռակի, պետք
է Լրեք անգամ շոյեր համբարը և մաքրում պա-
հեր մի խորհուրդ, առանց այդ մասին գուռակո-
ղին ասելու:

Գուռակոդը պատահականորեն բռնում էր համ-
բարի հատիկների մի մասը և սկսում մեկ-մեկ
բաց թողնել հատիկներն ու տսել. «Խեղ, շտո,
աստված...»: Այնքան էր կրկնում այդ բառերը,
մինչեւ հատիկները սպառվում էին: Եթե վերջին
հատիկը բաց էր թողնում խեղ բառը արտասանե-
լիս՝ լավ նշան էր համարվում, շառ բառի ժամա-
նակ՝ վատ: Իսկ եթե վերջին հատիկը միանում
էր աստված բառի դեպքում, նշանակում էր, թե
աստված գիտե. կարող է լավ լինել, կարող է
վատ: Այսպես կրկնվում էր երեք անգամ, ապա
որոշվում, թե ընդհանրապես գուռակապան ար-
դունքը լավ է, թե՛ վատ:

Միշինք—Նոր Բայաղեանում սովորութիւն կար
Մեծ պատի կեսին թխվածք թխել, որը կոչվում էր
միշինք (միշինք):

Միշինքի խմորը շաղախվում էր բուսական
յուղով (կովի կամ ոչխարի յուղ դործածել չէր
թույլատրվում, պատ էր): Հունցում էին աղաները,
ռաբերով: Երբ խմորը պատրաստ էր լինում,
տանախիկները վերցնում էր և բաժանում մի քանի
մասերի. մեծ մասը լինում էր միշինքը, մեջը
ղրամ էր դնում, ապա նորից հունցում ու րացե-
լով, որպես մեծ հաց, թխում թոնիքի շիկացած
կողին՝ ինչպես լավաշն են թխում:

Հաջորդ օրվա երեկոյան (նույն օրը չէր թույ-
լատրվում, միշինքը պիտի հաղորդատանալ, տլմս
է), երբ ընտանիքի բոլոր անդամները հավաք-
վում էին տանը, քուրսու շուրջը, ընկնում էին մի-
շինքը. տան ամենատարեքով կինը վերցնում էր
դանակը, միշինքի վրա խաշ էր քաշում ու սկսում
կտրել, բաժին հանելով յուրաքանչյուրին ըստ
հասակի՝ հորը, մորը, մեծ որդուն և այլն: Բաժին
էր հանվում նաեւ կովերին, ոչխարներին, սըտե-
րին, նույնիսկ հավերին: Յուրաքանչյուրը, հա-
կապես փոքրերը, սկսում էին շտապ ուտել կամ
կտրել իրենց բաժինը, փնտրելով նրա միջի
դրամը: Ում որ միշինք ընկնում էր, նախ՝ միշին-

քի միջի զրամը նրանն էր, ևրկըորդն ու ամենու-
ղիսավորը. նա ընամանիքում ամենարախտավոր,
ամենախելոք և ամենաանարարն էր համարվում:

Սակայն լինում էր և այնպես, սր միջինը
կարելու ժամանակ դրամն ընկնում էր դանակի
րևրանը: Դա նշան էր, որ այդ ընտանիքին մի մեծ
դժբախտություն կդառարհի տարվա ընթացքում.
դիցու՛ր՝ կովը կսաակի, լավ բերք չի սաացվի աբ-
սուբից, ասան անդամներից որևէ մեկը կհիվան-
դանա, կմահանա և այլն: Ուստի, փորձված տան-
տիկիներն աշխատում էին միջինը այնպես
կտրել, որ դանակի րևրանը չընկնի. իսկ եթե,
այնուամենայնիվ, կարելու ժամանակ դանակը
հանդիպում էր միջինի դրամին, կտրողը առա-
ջին իսկ վայրկյանից գդալով այդ, արագ փոխում
էր դանակի ուղղությունը այնպես, որ ընամանիքի
անգամներից ոչ ոք չէր նկատում:

Երեսը կրակվելը (շիկեելը)—Երբեմն մարդու
երեսը «վառվում—կրակվում ա», ասում էին նոր-
րայագեացիները: Երեսի տաքանալը դգալով,
կարծում էին, թե ինչ-որ տեղ իրենց մասին խո-
սում են, հավանորեն րամրասում են, որի հա-
մար էլ երեսը խաչ էին հանում աւ ասում. «Աստ-
ված, գու խերն անես»:

Ականջ կանչելը—Երբեմն հանկարծ մարդու
ականջում ձայներ են լսվում. նոր Բայաղետում
ասում էին՝ ականջս կանչեց: Ականջը կանչելու
ժամանակ ասվում էր՝ խեր, խեր, խեր, այսինքն՝

րարի, րարի, րարի: Բացատրում էին, թե այդ մի-
ջոցին, մի հեռու տեղ, մեկը ակամջը կանչողին
հիշում է: Դրա համար էլ սովորություն ունեին,
ևրր իրենք էլ մեկի մասին խոսում էին, որը ներ-
կա չէր, մանավանդ, ևրբ խոսակցությունը այդ
անձնավորության մասին դրական էր, նախքան
խոսելն ասում էին. «Հանգաճա կանչա, այսինչ»:

Սև կատուն նանուպարեը կտրեց—Եթե մեկը
փողոցով գնալիս մի սև կատու կտրում, անցնում
էր փողոցը ու առջևից մի ուրիշ մարդ չէր գնում,
որ տոաչինը անցներ կատվի կտրած ճանապար-
հը, կարծում էին, թե այն գործն, որի համար
գնում է՝ անհաջող կլինի: Լավ կլինի անհապաղ
ետ դառնալ կամ ճանապարհը փոխել:

Շենքի ոռնալը—Երբեմն առանց պատճառի
շենքը դիշերը ոռնում են: Կարծում էին, թե շան
աիրոջ տանը մի փորձանք կպատտհի: Եթե ըն-
տանիքում հիվանդ կար, կասկածն ու ահը ընկ-
նում էր անեցիների սիրտը. կարծում էին, որ
շունը հրեշտակների վրա էր ոռնում, որոնք եկել
էին հիվանդի հոգին առնելու:

Շան տերը իսկույն դուրս էր դալիս, ոննում,
թե ինչու է շունը ոռնում (դա՛յլ է երեացել այդ
կադմերում, թե՞ ուրիշ բան կա): Եթե ոռնտու
դրդալատճառը չէր դտնում, տպա շանը անմիջա-
պես արձակում ու դուրս էր անում. երբեմն տան
տերը ստտկացնում էր շանը, որով «փրկվում էր»
սպառնացող տղեաից:

ՏԼՄՄՆԵՐ (ԹԱԼԻՍՄԱՆ, ՆՄԱՅՈՒՄ)

Խալըլի (ախաաճաեել)—Երբեմն մի որևէ ա-
ման՝ կճուճ, քրեղան, պղինձ և այլն, խիստ կեղ-
տոավում էր, մուկ էր ընկնում, կատուն ձագերին
բերում, տեղավորում էր մեջը և այլն, և տան տերն
ափսոսում էր այն դեմ դցկլ, բայց և այդ վիճա-
կում էլ այլևս դործածել չէր կարող: Այդ դեպքում
ամտնը լավ լվտնում էր, եթե պղինձ է՝ ավաղով
շփում մինչև լտվ փայլելը, ապա ողողում մեռո-
նաջրով ու ամտնը համարվում էր «խալլուկ»:

Մեկի վրայով թռչելը արգելվում էր—Եթե մի
երեխա թռչում էր մի այլ երեխայի վրայով,
կարծում էին, թռչողն իր ողջ ացավն ու շոոր»
թափում է նստածի գլխին: Ուստի դա երբեմն
կովի պատճառ էր դառնում և երբեմն կովին
մասնակցում էին նաև երեխաների ծնողները:

Կոիվը վերջանում էր հաշտությունում ու խաղա-
ղությունում այն դեպքում, երբ թռչող երեխան նըս-
տում էր, իսկ մյուսը, որի գլխի վրայով թռել էին,
դալիս էր և նույնը անում, որով ացտվն ու շոոր»
ետ էր տալիս:

Գութա թխելիս տղամարդ չպետք է լինի թոն-
քի սնտ—Երբ տանը դաթա էին թխում, րուր
աղամարդիկ, ինչպես նաև երեխաները, թոնքի
մոա չպետք է լինեին, այլապես դաթաները թոն-
քի կողից կպոկվեին ու կընկնեին կրտկի վրա՝
կուա կդառնային:

Գութաճով գետը վարելը—Ամոան ամիսներին,
երբ արտերը պապակվում էին մի կաթիլ անձրեի
համար, նոր Բայաղետում կանաք հավաքվում
էին, մի դութան վերցնում, քաշելով տանում գե-
տը և սկոում գետը «վարել» առանց եղի կամ
ձիու, որպեսզի անձրև դա:

Լծվելով դութանին, գութանը յոթ անգամ վերև
էին տանում՝ դետի հոսանքին հակառակ ուղղու-
թյամբ և յոթ անգամ էլ ներքև, ուրից հետո, դե-
տի լայնքով էլ քտրշ էին տալիս երեք անգամ:
Այսպիսով ջրի մեջ ստացվում էր խտշ:

Գետում էլ լողացնելը—Երբ գութանով գետը
վտրելը չէր օգնում աստծու գութը շարժելու և
անձրև բերելուն, մի քանի կին հավաքվում էին,